ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Սեպտեմբերի 6-ին Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը Գորիս համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 56 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր երեսունինը, աշխատանքի տեղավորման՝ տասնվեց, գյուղի հիմնախնդիրների հարցով՝ մեկ քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից երեսուներկուսին տրվել է դրական լուծում, յոթը մերժվել է:

Աշխատանքի տեղավորման դիմումները վերցվել են հաշվառման:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում է գյուղի հիմնախնդիրների վերաբերյալ դիմումը:

ՀՀ Սյունիքի մարզպետարան